Հոպայ, զարգե՛ ու քելե՛ - Շիրակի մարզ, գ. Երազգավորս

<u>միասին</u>. Սելի վըրի բազուկը,
Հայ, լե, լե, հարայ լե,
Բաց թևիդ բիլազուկը,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>աղջիկ</u>. Մատանուս կապուտ ակը,
Հայ, լե, լե, հարայ լե,
Ցոլաց, ընկավ ձեր բակը,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>տղա</u>. Մատանուդ կապուտ ակը,
Հայ, լե, լե, հարայ լե,
Ի՞նչ գործ ունի մեր բակը,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>աղջիկ</u>. Ալագյազու ձորերն եմ,
Հայ, լե, լե, հարայ լե,
Մեր բաղի խնձորեն եմ,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>տղա</u>. Վանքի ձորում խաղ ասի,
Հայ, լե, լե, հարայ լե,
Խաղի մեջ քեզ բան ասի,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>աղջիկ</u>. Ա՛յ տղա ձորի միջին,
Հայ, լե, լե, հարայ լե,
Ես եմ քու խաղի միջին,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>տղա</u>. Պստիկ աղջիկ զալում ես,
Հայ, լե, լե, հարայ լե,

Ծամերդ սղալում ես,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>աղջիկ</u>. Գյուղի մեջ հենց տեսնում ես,
Հայ, լե, լե, հարայ լե,
Շաքարի պես հալվում ես,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>տղա</u>. Ջաղչի պատը ճաքած է,
Հայ, լե, լե, հարայ լե,
Աղջի, թուշդ պաչած է,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛:

<u>միասին</u>. Սիպտակ աղջիկ, սև տղա,
Հայ, լե, լե, հարայ լե,
Բռնել են իրար յախա,
Հոպայ, զարգե՛ ու քելե՛: